

«Գրանցված է»

ՀՀ արդարադատության
նախարարության կողմից

7 ապրիլի 2008 թ.

Պետական գրանցման թիվ 11708117

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

14 հունվարի 2008 թ.
ք. Երևան

N 09-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՇԵՆՔԵՐԻ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(Վերնագիրը խմբ. 03.04.09 N 35-Ն)

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10.1 հոդվածի ու ՀՀ կառավարության 2003 թվականի փետրվարի 20-ի N 156-Ն որոշման համաձայն և ի կատարումն ՀՀ կառավարության 2007 թվականի նոյեմբերի 23-ի N 1484-Ն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետի.

Հրամայում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցվող շենքերի, կառուցվածքների և շինարարական աշխատանքների տեսակների արժեքի խոշորացված ցուցանիշների ժողովածուն՝ համաձայն հավելվածի:

(1-ին կետը խմբ. 03.04.09 N 35-Ն)

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի մարտի 29-ի «ՀՀ տարածքում կառուցվող շենքերի և կառուցվածքների և շինարարական աշխատանքների տեսակների արժեքի խոշորացված ցուցանիշների հաստատման մասին» N 21 հրամանը:

Նախարար

Վ. Վարդանյան

Հավելված

Հաստատված է

ՀՀ քաղաքաշինության նախարարի
2008 թ. հունվարի 14-ի N 09-Ն հրամանով

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՇԵՆՔԵՐԻ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

I հատոր

1. ԿԻՐԱՌՄԱՆ ՈՒՈՐՏԸ

1. «Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցվող շենքերի, կառուցվածքների և շինարարական աշխատանքների տեսակների խոշորացված ցուցանիշների ժողովածու» նորմատիվատեխնիկական փաստաթղթի (այսուհետ՝ ժողովածու) կիրառումը տարածվում է ՀՀ կառավարության 2007 թվականի նոյեմբերի 23-ի «Շինարարության ոլորտում գնագոյացման նորմերի և նորմատիվների կիրառումն ապահովելու մասին» թիվ 1484-Ն որոշմամբ նախատեսված քաղաքաշինական գործունեության սուբյեկտների և կամ մասնակիցների (այդ թվում՝ կառուցապատողների, քաղաքաշինական փաստաթղթեր մշակողների, շինարարություն իրականացնողների, քաղաքաշինական գործունեության վերահսկողություն իրականացնողների) նկատմամբ:

2. Ժողովածուն մշակվել է ՀՀ տարածքում իրականացվող նոր շինարարության, գոյություն ունեցող շենքերի և շինությունների (օբյեկտների) վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, ընդլայնման, արդիականացման

(հետագայում՝ շինարարության) աշխատանքների արժեքի խոշորացված ցուցանիշների (ՇԱԽՑ) կիրառմամբ կապիտալ շինարարության ծրագրերի, նախագծերի մշակման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հաշվարկային չափի (կանխատեսումների) որոշման, ինչպես նաև գոյություն ունեցող կառույցների նախնական գնահատման համար:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3. ՇԱԽՑ-ների մշակման (այդ թվում՝ լրամշակման) համար հիմք են հանդիսացել.

1) 2006 թվականի գներով հաշվարկված կրթության, մշակույթի, առողջապահության և սոցիալական այլ ոլորտների, էներգետիկայի, կապի, կոմունալ տնտեսության համակարգի (այդ թվում՝ տիպարային) գոյություն ունեցող (ԳՈՒ) շենքերի և կառուցվածքների կառուցման խոշորացված արժեքները, որոնց նկատմամբ կիրառվել է 1.35 գործակիցը:

1.1) Գոյություն ունեցող շենքերի և կառուցվածքների ՇԱԽՑ-ներում հաշվի չեն առնված սարքավորումների արժեքները, աշխատանքների և շինհրապարակի կազմակերպման հետ կապված ծախսերը (ժամանակավոր շենքերի և կառուցվածքների), ձմեռային պայմաններում աշխատանքի համար հավելումը, աշխատանքային (նեղվածության, անապատային, կիսաանապատային) պայմանները, սահմանված հարկերը:

2) Հիմնադրամների, Դրամաշնորհների, Գերատեսչությունների և տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-երի) պատվիրատվությամբ Նախագծային կազմակերպությունների կողմից՝ 2006-2008 թ. թ. արդի նախագծերով նախագծված օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերը, որոնց նախահաշվային արժեքների նկատմամբ կիրառվել են համապատասխան գործակիցներ՝ 1,35, 1,303, 1,09:

Ցուցանիշներում չի հաշվառվել ԱԱՀ՝ 20%:

4. ՇԱԽՑ-ներում հաշվի են առնվել անմիջապես աշխատանքների կատարման հետ կապված ծախսերը, սոց. հատկացումները, կառավարման ապարատի պահպանման (վերադիր) ծախսերը, կապալառու կազմակերպությունների շահույթը:

5. ՇԱԽՑ-ները հաշվարկված են 2008 թ. գներով՝ 1\$=305.0 դրամ ընթացագնով:

6. Ըստ անհրաժեշտության (1 ամսվա կտրվածքով)՝ խոշորացված ցուցանիշները կարող են վերահաշվարկվել շինարարության արժեքի կապիտալ ներդրումների կամ շինմոնտաժային աշխատանքների մոտավոր ինդեքսների կիրառմամբ՝ հետևյալ բանաձևով.

$$\text{ՇԱԽՑ} = \text{Ա} \times \text{Q}$$

որտեղ՝

Ա-ն՝ ՇԱԽՑ-ում բերված արժեքն է

Q-ն՝ տվյալ ժամանակահատվածում հաշվարկվող մոտավոր ինդեքսի ցուցանիշի փոփոխությունը կամ՝ $Q = Q1 / Q2 < /SUB >$:

Q1՝ խոշորացված արժեքի մշակման պահի դրությամբ արձանագրված կապիտալ ներդրումների (կամ շինմոնտաժային աշխատանքների) ինդեքսի չափը Q2՝ կապիտալ ներդրումների (կամ շինմոնտաժային աշխատանքների) ինդեքսի չափը վերահաշվարկման պահի դրությամբ:

7. Ըստ կառույցի ավարտվածության աստիճանի՝ տվյալ օբյեկտի կառուցման (ավարտման) կամ վերակառուցման արժեքի համապատասխան հաշվարկը հնարավոր է կատարել ելնելով շինարարության արժեքում հաշվառվող աշխատանքների կամ հնարավոր ծախսերի ներքոհիշյալ խոշորացված կառուցվածքից.

ՕԲՅԵԿՏԻ ԱՐԺԵՔԻ ՄՈՏԱՎՈՐ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Աշխատանքների անվանումը	Օբյեկտի արժեքում կազմող մասնաչափը՝ %-ով
Հողային աշխատանքներ	3.0
Հիմքեր	5.8
Պատեր և միջնապատեր	37.5
Միջհատկային ծածկ և աստիճաններ	12.5
Տանիք	5.2
Հարդարման աշխատանքներ	17.5
Դռներ և պատուհաններ	10.0
Սանտեխաշխատանքներ	5.7
Էլեկտրաաշխատանքներ	1.5
Այլ աշխատանքներ	1.3
Ընդամենը	100

I - ՇԵՆՔԵՐ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

N/N	Հիմնավորում	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	Արժեքը՝ 2006 թ. գներով (հազ.	Արժեքը 2008 թ. գործող գներով՝
-----	-------------	---------------------	----------------	------------------------------	-------------------------------

				դրամ)	արժեքի փոփոխման նոտավոր ինդեքսի աճի միջի- նացված ցուցանիշի կիրառմամբ՝ 2006 թ.՝ q=1.35, 2007թ.՝ q=1.303, 2008թ.՝ q=1.09
1	2	3	4	5	6
1. ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐ					
1	«Հայնախագիծ» ԲԲԸ	32 բնակարանով 4-հարկանի բնակելի (ք.Երևան, Աջափնյակ թաղամաս), քարի «Միդիս» շարվածք, կոմպլեքս կոնստրուկցիա:	քմ		151.17
2	«Երևաննախագիծ» ԲԲԸ	Բազմաբնակարան 9-հարկանի բնակելի շենք՝ մանսարդով (ք.Երևան), ե/բ հիմնակմախքով:	քմ		266.18
3	Երևանի քաղաքապետարան	Բազմաբնակարան 10-հարկանի բնակելի շենք՝ 50 բնակարանով (ք.Երևան), խոշորապանել հավաքովի ե/բ կոնստրուկցիաներ և տրանսֆորմատորային ենթակայան:	քմ		214.25
4	Երևանի քաղաքապետարան	Բազմաբնակարան 10-հարկանի բնակելի շենք՝ 50 բնակարանով (ք.Երևան), խոշորապանել հավաքովի ե/բ կոնստրուկցիաներ:	քմ		214.84
5	Երևանի քաղաքապետարան	Բազմաբնակարան 10-հարկանի բնակելի շենք՝ 50 բնակարանով (ք.Երևան), խոշորապանել հավաքովի ե/բ կոնստրուկցիաներ, արտաքին կոմունիկացիա-ներ, տարածքի բարեկարգում:	քմ		327.4
6	Երևանի քաղաքապետարան	Բազմաբնակարան 10-հարկանի բնակելի շենք՝ 50 բնակարանով (ք.Երևան), խոշորապանել հավաքովի ե/բ կոնստրուկցիաներ:	քմ		184.9
7	Երևանի քաղաքապետարան	Բազմաբնակարան 10-հարկանի բնակելի շենք՝ 50 բնակարանով (ք.Երևան), խոշորապանել հավաքովի ե/բ կոնստրուկցիաներ, տրանսֆորմատորային ենթակայանով, ջրամատակարարման, կոյուղու, գազի արտաքին ցանցեր և բարեկարգում:	քմ		244.04
8	ԳՈՒ	9 հարկանի խոշորապանել բնակելի շենք:	քմ	144.88	195.59
9	ԳՈՒ	5 հարկանի քարե բնակելի շենք:	քմ	147.69	199.38
10	ԳՈՒ	5 հարկանի խոշորապանել բնակելի շենք:	քմ	145.2	196.02
11	ԳՈՒ	4 հարկանի միաձույլ բետոնից բնակելի շենք:	քմ	143.51	193.74
12	ԳՈՒ	4 հարկանի խոշորապանել բնակելի շենք:	քմ	147.03	198.49
13	ԳՈՒ	4 հարկանի կանոնավոր քարից բնակելի շենք:	քմ	145.62	196.59

14	ԳՈՒ	3 հարկանի կանոնավոր քարից բնակելի շենք:	քմ	148.11	199.95
15	ԳՈՒ	3 հարկանի բետոնյա բնակելի շենք:	քմ	145.22	196.05
16	ԳՈՒ	3 հարկանի տուֆ քարից «Միդիս» շարվածքով բնակելի շենք:	քմ	150.27	202.86
17	ԳՈՒ	2 հարկանի տուֆ քարից «Միդիս» շարվածքով բնակելի շենք:	քմ	149.93	202.41
18	ԳՈՒ	2 հարկանի խոշորապանել բնակելի շենք:	քմ	152.94	206.47
19	ԳՈՒ	1 հարկանի տուֆ քարից «Միդիս» շարվածքով բնակելի շենք:	քմ	151.35	204.32
20	ԳՈՒ	9 հարկանի 150 տեղանոց հանրակացարան-բնակելի շենք /1,5 մ տեխնիկական հարկի բարձրությամբ և 3 մ բարձրությամբ, նկուղով, հատակագծում 12x24 մ չափերով, սյուները, հեծանները, ծածկերի սալերը, որմնապանելները՝ հավաքովի ե/բ, տանիքը գլանափաթեթային, շենքի ծավալը 11060 մ³:	խմ	31.97	43.16
21	ԳՈՒ	Քարե բնակելի շենքերի ուժեղացումը և վերականգնումը ըստ «լրիվ գոտեկապ» սխեմայի:	քմ	97.1	131.09
22	ԳՈՒ	Քարե բնակելի շենքերի ուժեղացումը և վերականգնումը ըստ «լրիվ գոտեկապ» սխեմայի:	քմ	79.8	107.73
23	ԳՈՒ	Բնակելի տուն երկհարկանի երկբնակարան (3-3 կամ 3-4), երկու մակարդակով, կանոնավոր ձևի տուֆաքարերից պատերով, հավաքովի երկաթետոնե ծածկով, ցինկապատ ալիքավոր թերթերից տանիքով, պատուհանների և դռների բացվածքների լցվածքներով «Կարիտաս» ֆիրմայի բլոկներով:	քմ	167.67	226.35
24	ԳՈՒ	Բնակելի տուն միահարկ միաբնակարան, մեկ սենյականոց, կանոնավոր ձևի տուֆաքարերից պատերով, հավաքովի երկաթետոնե ծածկով, ցինկապատ ալիքավոր թերթերից տանիքով, պատուհանների և դռների բացվածքների լցվածքներով «Կարիտաս» ֆիրմայի բլոկներով:	քմ	191.62	258.69
25	ԳՈՒ	Բնակելի տուն միահարկ միաբնակարան, երկու սենյականոց, կանոնավոր ձևի տուֆաքարերից պատերով, հավաքովի երկաթետոնե ծածկով, ցինկապատ ալիքավոր թերթերից տանիքով, պատուհանների և դռների բացվածքների լցվածքներով «Կարիտաս» ֆիրմայի բլոկներով:	քմ	182.25	246.04
26	ԳՈՒ	Բնակելի տուն միահարկ միաբնակարան, երեք սենյականոց, կանոնավոր ձևի տուֆաքարերից պատերով, հավաքովի երկաթետոնե	քմ	167.09	225.57

		ծածկով, ցինկապատ ալիքավոր թերթերից տանիքով, պատուհանների և դռների բացվածքների լցվածքներով «Կարիտաս» ֆիրմայի բլոկներով:			
27	ԳՈՒ	Բնակելի տուն միահարկ միաբնակարան, հինգ սենյականոց, կանոնավոր ձևի տուֆաքարերից պատերով, հավաքովի երկաթետոնե ծածկով, ցինկապատ ալիքավոր թերթերից տանիքով, պատուհանների և դռների բացվածքների լցվածքներով «Կարիտաս» ֆիրմայի բլոկներով:	քմ	151.94	205.12
28	ԳՈՒ	Բնակելի տուն միահարկ երկբնակարան, երկու-երեք սենյականոց բնակարանով, կանոնավոր ձևի տուֆաքարերից պատերով, հավաքովի երկաթետոնե ծածկով, ցինկապատ ալիքավոր թերթերից տանիքով, պատուհանների և դռների բացվածքների լցվածքներով «Կարիտաս» ֆիրմայի բլոկներով:	քմ	148	199.80
29	ԳՈՒ	Երկհարկանի բնակելի տուն I հարկը բազալտից «կոպտատաշ» քարերից, II հարկը տեղական տուֆ քարից, ճակատը (երկու կողմից) մաքուր տաշած բարդ շաղախով, ներսից սվաղված գաջի շաղախով, վերնածածկը միաձույլ երկաթետոնյա:	խմ	22.53	30.42
30	ԳՈՒ	Երկհարկանի բնակելի տուն Արթիկ տուֆից, I հարկը «կոպտատաշ» քարերից, II հարկը մաքուր տաշված բարդ շաղախով, ծածկը միաձույլ երկաթետոնյա, ներսից սվաղված գաջի շաղախով:	խմ	18.95	25.58
31	ԳՈՒ	Երկհարկանի բնակելի տուն տեղական տուֆ քարից կանոնավոր ձևի, բարդ շաղախով, ներսից սվաղված գաջի շաղախով, վերնածածկը երկաթետոնյա:	խմ	16.98	22.92
32	ԳՈՒ	Երկհարկանի բնակելի տուն տարբեր բազալտներից բարդ շաղախով, ներսից սվաղված կրային շաղախով, վերնածածկը փայտից է:	խմ	18.27	24.66
33	ԳՈՒ	Բնակելի տուն նկուղով Արթիկ տուֆ քարից «Միդիս» շարվածքով բարդ շաղախով, ներսից սվաղված գաջի շաղախով, վերնածածկը երկաթետոնյա:	խմ	20.99	28.34
34	ԳՈՒ	Բնակելի տուն կիսանկուղով տեղական տուֆ քարից կանոնավոր ձևի բարդ շաղախով, ներսից սվաղված գաջի շաղախով, վերնածածկը երկաթետոնյա:	խմ	14.76	19.93
35	ԳՈՒ	Բնակելի տուն կիսանկուղով, նկուղային հարկը Արթիկ տուֆ քարից կանոնավոր ձևի ցեմենտային շաղախով, ներսից սվաղված գաջի շաղախով.	խմ	18.18	24.54

		վերնածածկը երկաթբետոնյա:			
36	ԳՈՒ	Բնակելի տուն կիսանկողով բազալտից բարդ շաղախով, վերնածածկը երկաթբետոնյա:	խմ	22.06	29.78
37	ԳՈՒ	Մեկ հարկանի բնակելի տուն տեղական տուֆ քարից կանոնավոր ձևի ցեմենտային շաղախով, ներսից սվաղված գաջի շաղախով, վերնածածկը երկաթբետոնյա:	խմ	18.78	25.35
2. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ					
2.1 Հանրակրթական դպրոցներ					
38	ՀՄՆ հիմնադրամ	Դպրոցի շենքին կից մարզադահլիճի կառուցում (270աշ. տեղ, 360քմ):	քմ		225.31
			աշ. տեղ.		0.834
39	ՀՄՆ հիմնադրամ	Դպրոցի շենքին կից մարզադահլիճի կառուցում 24x12.4, առանցքային չափերով, հանդերձարանների տաք անցումով 6.1x 12մ չափերով (արտաքին պատերի շավածքը «Միդիս» տիպի սրբատաշ տուֆ քարերով, հիմքերն առածգական, հիմնատակերի վրա՝ հոծ միաձույլ ե/բ սալերով, արտաքին պատերի տակ՝ ժապավենային բետոն: Դահլիճի կրող կարկասը՝ ե/բ շրջանակներից, կոշտ ամրանով պարզունակներից, միահարկ տաք անցումը՝ ե/բ միաձույլ կարկասով, ծածկերը հավաքովի անցքավոր սալերով, միաձույլ հեծաններով, տանիքը՝ քառալանջ փայտե կոնստրուկցիաների վրա, իսկ ծածկույթը՝ ցինկապատ ալիքավոր թիթեղից, ազատ ջրահեռացում, ասֆալտբետոնե սալվածք՝ բազալտե եզրաքարերով, շենքի պատերի, առաստաղների գաջե սվաղում լատեքսային ներկով, հատակները՝ փայտե, պրեսզրանիտե և խեցե սալիկներից, ներքին և արտաքին ջրամատակարարում և կոյուղի, էլ. սնուցում և ջեռուցում՝ առկա կաթսայատնից, պողպատե խողովակներով, ջերմատարի ստորին մատակարարում) 350 աշ. տեղ, 352քմ:	քմ		261.8
			աշ. տեղ.		0.748
40	ՀՀ քաղշին. նախ.	Մարզադահլիճային մասնաշենքով 180 աշ. տեղ. և 12 դասասենյակներով դպրոցի կառուցում (ՀՀ Արագածոտնի մարզ) (1597քմ մակերեսով, 48մx14.8մ և 9մx18մ չափերով, երկհարկանի, միաձույլ ե/բ հակասեյսմիկ գոտի, միաձույլ խամքարաբետոնե ժապավենային հիմք, որմնախարիսը՝ բետոնից, ուսումնական մասնաշենքի մասում արտաքին պատերը՝ սրբատաշ բազալտ, ամբողջ շինության արտաքին պատերը՝ «Միդիս» շաղվածքի սրբատաշ տուֆ. իսկ	քմ		235.8
			աշ. տեղ		1.605

		ներքին պատերը՝ կանոնավոր որմնաքար, սպորտային դահլիճը երեսապատված է բազալտե սալիկներով, տանիքը՝ բազմալանջ):			
			քմ		204.49
	ՀՀ քաղշին. նախ.	Ղարոցի 350 աշ. տեղ 12 դասասենյակով, նոր մասնաշենքի կառուցում (ՀՀ Արմավիրի մարզ) (1420քմ մակերեսով, 48մx14.8մ չափերով, երկհարկանի, միաձույլ ե/բ հակասեյսմիկ գոտի, միաձույլ խամքարաբետոնե ժապավենային հիմք, որմնախարիսխը՝ բետոնից, ուսումնական մասնաշենքի մասում արտաքին պատերը՝ սրբատաշ բազալտ, ամբողջ շինության արտաքին պատերը՝ «Միդիս» շարվածքի սրբատաշ տուֆ, իսկ ներքին պատերը՝ կանոնավոր որմնաքար, սպորտային դահլիճը երեսապատված է բազալտե սալիկներով, տանիքը՝ բազմալանջ և երկլանջ):	աշ. տեղ		0.637
41	ԳՈՒ	Հանրակրթական դպրոց 1176 աշակերտական տեղով:	1 աշ. տեղ	0.76	1.021
42	ԳՈՒ	Հանրակրթական դպրոց 9 դասասենյակով, 350 աշակերտական տեղով:	1 աշ. տեղ	1.61	2.17
43	ԳՈՒ	Հանրակրթական դպրոց 22 դասասենյակով, 844 աշակերտական տեղով:	1 աշ. տեղ	1.62	2.18
44	ԳՈՒ	Ղարոցների ուժեղացում և վերականգնում:	քմ	129.02	174.18
45	ԳՈՒ	Եռահարկ 56,1x12,9մ չափերով քարե շենքի ուժեղացումը և վերականգնումն ըստ «լրիվ գոտեկապ» սխեմայի օբյեկտի վիճակի դեպքում, երբ գույություն ունեն պատերը, ծածկերը և վերածածկի մի մասը:	խմ	19.27	26.01
		2.2 Նախադպրոցական կրթական կազմակերպություններ			
46	ԳՈՒ	Մանկապարտեզ 280 տեղանոց:	տեղ	1.742	2.35
47	ԳՈՒ	Մսուր -մանկապարտեզ 140 տեղանոց:	տեղ	2.177	2.94
		2.3 Առողջապահական կազմակերպություններ			
48	ՀՄՆ հիմնադրամ	Վիրահատարանի մասնաշենքի կառուցում 11.4x10.7մ, եռահարկ, միաձույլ ե/բ հիմնահեծաններով, պատերը կանոնավոր տուֆ քարից:	քմ		170.56
49	ՀՄՆ հիմնադրամ	Ամբուլատորիայի շենքի վերակառուցում (172քմ, 25 այցելություն/օր):	քմ		169.62
			այցելու		1.17
50	ՀՀ առողջ. նախ.	Առողջապահական կենտրոնի կառուցում:	քմ		293.56
51	ՀՀ առողջ. նախ.	Ամբուլատորիայի կառուցում:	քմ		283.47
52	ՀՀ առողջ. նախ.	Առողջության պահպանման կենտրոնի կառուցում:	քմ		340.97
53	ՀՀ առողջ. նախ.	Առողջության պահպանման կենտրոնի կառուցում:	քմ		223.92

54	«Ա» ԳԼԽ.	Առողջության պահպանման կենտրոնի կառուցում:	քմ		337.64
55	«Ա» ԳԼԽ.	Առողջության պահպանման կենտրոնի կառուցում:	քմ		244.98
56	«Ա» ԳԼԽ.	Բուժամբուլատորիայի կառուցում:	քմ		306.05
57	ԳՈՒ	3 հարկանի հավաքովի ե/բ պանելներից ծննդատան մանկաբարձային բաժանմունք (1-ին հարկում տեղադրված է դեղատուն):	մահձ.	8.066	10.89
58	ԳՈՒ	Երկհարկանի ինֆեկցիոն հիվանդանոցի մասնաշենք:	մահձ.	10.617	14.33
59	ԳՈՒ	50 մահձակալանոց հիվանդանոց:	մահձ.	17.429	23.53
60	ԳՈՒ	Հիվանդանոց 120 հաճախումով 500 հաճախումով պոլիկլինիկայում:	մահձ.	18.994	25.64
61	ԳՈՒ	«Միդիս» շարվածքով բուժկետ 70 հաճախումով մեկ հերթափոխում:	հաճախում	2.145	2.90
62	ԳՈՒ	Հիվանդանոց 50 մահձակալի համար ըստ Tկ2-05A-02 վարակիչ և պաթոլոգաանատոմիական մասնաշենքերով, ինչպես նաև համալիրում ինժեներական ցանցերով ու կառուցվածքներով:	մահձ.	20.554	27.75
63	ԳՈՒ	50 մահձակալի համար հիվանդանոցի գլխավոր մասնաշենք:	մահձ.	13.144	17.74
64	ԳՈՒ	50 մահձակալի համար հիվանդանոցի վարակիչ հիվանդությունների մասնաշենք:	մահձ.	3.887	5.25
65	ԳՈՒ	50 մահձակալի համար հիվանդանոցի պաթոլոգաանատոմիական մասնաշենք:	մահձ.	0.541	0.73
66	ԳՈՒ	Հիվանդանոց 120 մահձակալի համար ըստ Tկ2-05A-02 վարակիչ հիվանդությունների և պաթոլոգաանատոմիական մասնաշենքերով, ինչպես նաև համալիրում ինժեներական ցանցերով ու կառուցվածքներով:	մահձ.	22.373	30.20
67	ԳՈՒ	120 մահձակալի համար հիվանդանոցի գլխավոր մասնաշենք:	մահձ.	14.083	19.01
68	ԳՈՒ	120 մահձակալի համար հիվանդանոցի վարակիչ հիվանդությունների մասնաշենք:	մահձ.	2.446	3.30
69	ԳՈՒ	120 մահձակալի համար հիվանդանոցի վարակիչ հիվանդությունների մասնաշենք:	մահձ.	0.376	0.51
70	ԳՈՒ	120 մահձակալի համար հիվանդանոցի տնտեսական մասնաշենք:	մահձ.	1.738	2.35
71	ԳՈՒ	Նախաբուժարան 500 հաճախումների համար ըստ Tկ252-4-17:	մահձ.	1.289	1.74
		2.4 Սոցիալական նշանակության օբյեկտներ, տուն-ինտերնատներ			
72	«Ա» ԳԼԽ. և սոցիալական հարցերի նախ.	«Երեխաների տուն» 2-հարկանի մասնաշենք (ք. Գյումրի), ե/բ մոնոլիտ կարկասով, սրբատաշ տուֆե շարվածքով և նկուղով (75 մահձակալ),	քմ		203.55
			մահձ.		2,315.99

		1152 քմ ընդհանուր մակերեսով:			
73	ՀՀ աշխ. և սոցիալական հարցերի նախ.	Մասնագիտացված մանկատան 2-հարկանի ննջարանային մասնաշենք (խարբերո), ե/բ մոնոլիտ կարկասով, սրբատաշ տուֆե շարվածքով և նկուղով (100 մահճակալ), 3751 քմ ընդհանուր մակերեսով:	քմ		183.04
			մահճ.		5,269.30
		2.5 Մարզական օբյեկտներ			
74	«Հայնախագիծ» ԲԲԸ	Մարզաառողջարարական 2 հարկանի համալիր (ք. Երևան, Օղակաձև զբոսայգի), կրող միաձույլ երկաթբետոնե հիմնակմախքով:	քմ		738.1
75	ՀՀ քաղշին. նախ.	Մարզադպրոցի կառուցում (2268 քմ մակերեսով, 36մx31.5մ չափերով, Կոտայքի մարզ, Երկհարկանի, միաձույլ ե/բ հակասեյսմիկ գուտի, միաձույլ խամքարաբետոնե ժապավենային հիմք, արտաքին պատերի շարվածքը «Միդիս» տիպի սրբատաշ տուֆ քարերով):	քմ		274.1
76	ԳՈՒ	Մարզաառողջարարական մասնաշենք թեթև մետաղյա կոնստրուկցիաներից (36x18) մ սրահով:	քմ	176.02	237.63
		3. ՎԱՐՉԱՎԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ			
77	«Հայնախագիծ» ԲԲԸ	«Միջազգային բիզնես կենտրոն»-ի վարչական 4-հարկանի մասնաշենք (ԼՂՀ, Ստեփանակերտ), պատերը հավաքովի ե/բ բլոկներով, ծածկերը՝ անհեծան ե/բ սալերով:	քմ		363.94
78	«Հայնախագիծ» ԲԲԸ	Ընդհանուր իրավասության դատարանի, Հարավային քաղաքացիական դատարանի և Հարավային քրեական դատարանի նոր շենքային 2-հարկանի համալիր (ՀՀ Վայոց ձոր, ք. Եղեգնաձոր), կրող միաձույլ ե/բ հիմնակմախք, պատերը տեղական քարի շարվածքով:	քմ		328.60
79	«Հայնախագիծ» ԲԲԸ	Առաջին ատյանի դատարանի նստավայրի 2-հարկանի նոր շենք (ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ), կրող միաձույլ ե/բ հիմնակմախք, պատերը տեղական քարի շարվածքով:	քմ		287.40
80	ՀՀ աշխ. և սոցիալական հարցերի նախ.	Սոցիալական ծառայությունների 3-հարկ համալիր կենտրոն ե/բ մոնոլիտ կարկասով, սրբատաշ տուֆե շարվածքով:	քմ		173.72
81	«Երևաննախագիծ» ԲԲԸ	Ոստիկանության 6- հարկանի վարչական շենքի կառուցում (ք.Երևան), ե/բ հավաքովի կոնստրուկցիաներով (նկուղով):	քմ		239.67
82	«Երևաննախագիծ» ԲԲԸ	Ոստիկանության 2- հարկանի վարչական շենքի կառուցում (ք.Ծաղկաձոր), քարե պատերով:	քմ		272.90
83	«Երևաննախագիծ» ԲԲԸ	Առաջին ատյանի դատարանի շենքի վերակառուցում (ք. Աբովյան), կոմպլեքս կոնստրուկտիվ համակարգով:	քմ		173.70

84	«Երևաննախագիծ» ԲԲԸ	Առաջին ատյանի դատարանի շենքի վերակառուցում (ք.Հրազդան), կոնստրուկտիվ կոնստրուկտիվ համակարգով, ե/բ կարկասային կոնստրուկցիաներով:	քմ		182.79
85	ԳՈՒ	Մեկ հարկանի անցատնակ (շենքի ծավալը՝ 45,4 մ ³ , հատակագծում 3,6x3,0 մ չափերով, 3,0 մ բարձրությամբ, սրբատաշ բազալտե և տուֆե քարերից և հավաքովի ե/բ ծածկով: Տանիքը գլանափաթեթային, եռաթեք):	խմ	67.74	91.45
86	ԳՈՒ	Վերահսկման-անցագրային կետ (շենքի ծավալը՝ 161,8 մ ³ , տիպային նախագիծ 503-309, կմախքը հավաքովի ե/բ տարրերով, պատերը սրբատաշ տուֆե և բազալտե քարերից, տանիքը գլանափաթեթային):	խմ	139.09	187.77
87	ԳՈՒ	Վերահսկման-անցագրային կետ (շենքի ծավալը՝ 109 մ ³ , 1-հարկանի, հատակագծում 4,9x7,0 մ չափերով 3,3 մ բարձրությամբ, պատերը սրբատաշ տուֆե և բազալտե քարերից, ծածկերը՝ հավաքովի ե/բ սալերից, հավաքովի ե/բ պարզունակների վրայով, տանիքը՝ գլանափաթեթային):	խմ	80.24	108.32
88	ԳՈՒ	Նավթամթերման պահեստարան, պողպատյա գլանաձև հորիզոնական հարթ հարթակով 100 մ ³ տարողության:	1 պահեստարան	5459.43	7,370.23
4. ՄՆԱԿՈՒԹԱՅԻՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ					
89	ԳՈՒ	«Միդիս» շարվածքով տուֆ քարից 425 տեղանոց ակունք:	տեղ	900.65	1,215.88
90	«Երևաննախագիծ» ԲԲԸ	Հուշարձանի մասնաշենքի վերակառուցում (ք.Երևան), ե/բ կոնստրուկցիա:	քմ		301.90
91	«Երևաննախագիծ» ԲԲԸ	Բերդապատի դարպասի վերականգնում (ք.Շուշի), քարե շարվածք, բետոնե ամրակցումով:	խմ		44.20
92	«Երևաննախագիծ» ԲԲԸ	Թատրոնի շենքի վերակառուցում (ք. Ստեփանակերտ), մոնոլիտ ե/բ հիմնակմախքով:	քմ		157.04
93	ՀՍՆՀ	Համայնքային կենտրոնի շենքի կառուցում:	քմ		209.04
94	ՀՍՆՀ	Համայնքային կենտրոնի շենքի կառուցում (ջեռուցման մասնակի համակարգով, առանց կոյուղահորի, բարեկարգման, կոյուղի արտաքին ցանցի, ջրամատակարարման արտաքին ցանցի) մակերես՝ 540քմ:	քմ		170.68
95	ՀՍՆՀ	Համայնքային կենտրոնի շենքի կառուցում մակերես՝ 312քմ:	քմ		151.76
96	ՀՍՆՀ	Համայնքային կենտրոնի շենքի կառուցում 29.8x19մ, երկհարկանի, հիմքերը երկաթբետոնե սյունավոր և ժապավենաձև, տանիքը՝ թեք, փայտե ծափղնավոր, ցինկապատ թիթեղից, երկհարկանի հատվածի ծածկերը՝ երկաթբետոնե սալերից,	քմ		156.85

		մակերես՝ 590քմ:			
97	ՀՍՆՀ	Համայնքային կենտրոնի շենքի վերակառուցում և ուժեղացում (դահլիճային մասի ուժեղացում, տանիքի վերակառուցում, հարդարում, հատակների կառուցում, էլ. սնուցում), վերակառուցման մակերես՝ 2195.0քմ:	քմ		42.56
5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ					
98	«Երևաննախագիծ» ԲԲԸ	Զբոսայգու բարեկարգում (ք. Երևան), մակերես՝ 1.64հա:	հա		192,653.10
99	ՀՀ բնապ. նախ.	Օդային ավազանի աղտոտվածության մոնիտորինգի կայանի շենքի կառուցում, տարածքի բարեկարգում և ցանկապատում (ք. Ծաղկաձոր), մակերես՝ 183քմ:	քմ		287.36
100	ՀՀ բնապ. նախ.	Հիդրոլոգիական դիտակետի ընդունարանի շենքի կառուցում, տարածքի բարեկարգում, ջրամատակարարման և կոյուղուցանց (Արաքս-Սուրմալու) շինության մակերես՝ 84.55քմ + պատնեշ:	քմ		263.04
6. ԱՌԵԿՏՐԻ ԵՎ ՄՊԱՍԱՐԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ					
101	ԳՈՒ	Հանրախանութ «Միդիս» շարվածքով տուֆ քարից:	քմ	116.19	156.86
7. ԱՐՏԱՂՈՒԿԱՆ ՇԵՆՔԵՐ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ					
102	ԳՈՒ	Պեմզաբլոկների և միջնորմների սալերի արտադրամաս (շենքի ծավալը՝ 8895 մ ³ , հատակագծում 18x48 չափերով, 6x18 սյուների ցանցով, բարձրությունը մինչև կրող կոնստրուկցիաների ներքևը 7,2 մ, հիմքը միաձույլ ե/բետոնյա, սյուները, ծածկի հեծանները երկտավրից, ծածկը հավաքովի երկաթբետոնյա սալերից):	խմ	12.98	17.52
103	ԳՈՒ	Արտադրանախապատրաստման մասնաշենք (շենքի ծավալը՝ 25392 մ ³ , 4 թռիչքային շենք, հատակագծում 24x73 մ չափերով, 13,8 մ բարձրությամբ, հիմքը ժայռավեցային բուտոբետոնից և միաձույլ ե/բետոնյա, շենքի հիմնակմախքը՝ սյուները հավաքովի երկաթբետոնյա, պարզունակ հավաքովի երկաթբետոնյա, ուղղանկյուն մահճակներով, պատերը որմնապանելներից, երեսապատված տուֆի սալերով և կանոնավոր տուֆ քարից, ծածկը հավաքովի երկաթբետոնյա կողավոր սալերից):	խմ	15.8	21.33
104	ԳՈՒ	Երկրորդական հումքի արտադրանախապատրաստման մասնաշենք (շենքի ծավալը - 6350 մ ³ , 3-թռիչքային, հատակագծում 54x18մ չափերով և 6,3մ բարձրությամբ, հիմքը ժայռավեցային բուտոբետոնից և միաձույլ ե/բետոնից, շենքի	խմ	26.59	35.90

		հիմնակմախքը՝ սյուները, հեծանները և ծածկի սալերը հավաքովի երկաթբետոնյա, պատերը՝ որմնապանելներից և առանձին հատվածներում սրբատաշ տուֆի քարից և բազալտից, տանիքը գլանափաթեթային եռալանջային):			
105	ԳՈՒ	Երկրորդական հումքի արտադրանախապատրաստման ձեռնարկության արտադրական մասնաշենք կենցաղային և գրասենյակային շենքերով (արտադրական մասի ծավալը - 5432 մ ³ , կենցաղային մասը - 1630 մ ³ : Արտադրական մասնաշենքը հատակագծում 36x18մ չափերով 6,9մ բարձրությամբ, երկհարկանի կենցաղային և գրասենյակային մասը 12x18մ չափերով, 7,5մ բարձրությամբ, շենքի հիմնակմախքը հավաքովի երկաթբետոնյա տարրերից, պատերը՝ որմնապանելներից երեսապատված տուֆե սալերով. արտադրական մասի ծածկը կողավոր սալերից տավրային շին. հենակներով, կենցաղային մասի ծածկը և միջհարկային ծածկը և ե/բ պանելներից և պարզունակներից, տանիքը գլանափաթեթային):	խմ	15.93	21.51
106	ԳՈՒ	Էլեկտրամոնտաժային իրերի գործարանի գլխավոր արտադրական մասնաշենք (շենքի ծավալը - 46040մ ³ , 1-հարկանի շենք, հատակագծում 78x54 չափերով, 11,4 մ բարձրությամբ, տանիքը գլանափաթեթային):	խմ	14.49	19.56
107	ԳՈՒ	Բետոնախարճիչ կայան (շենքի ծավալը - 949,1 մ ³ , 3-հարկանի, հատակագծում 12x4 մ չափերով, 11,5մ բարձրությամբ, պատերը՝ պանելային, երեսապատված տուֆե սալիկներով, ծածկը երկաթբետոնյա հարթ սալերից, տանիքը գլանափաթեթային):	1 կայան	39,945.94	53,927.02
108	ԳՈՒ	Կոմպրեսորային կայան 40 մ/րոպեում արտադրողականությամբ, ավտոմատացված (շենքի ծավալը - 1050,0 մ ³ , 904-1-57,85 տիպային նախագիծ, պատերը՝ որմնապանելային, երեսապատված տուֆե սալիկներով, ծածկը՝ ե/բ սալերից, ե/բ ծպեղյա տավրային հեծաններով, տանիքը գլանափաթեթային):	1 կայան	40,859.76	55,160.68
109	ԳՈՒ	Լցանյութերի պահեստ 550 մ տարողությամբ (տիպային նախագիծ 409-19-8,85, այն բաղկացած է՝ լցանյութի մատուցման սրահ՝ ծավալը 265 մ ³ , փոխաբեռնման կետ՝ ծավալը 147	խմ	70.17	94.73

		մ ³ , դարսակային սրահ և մասնատիչ պատեր՝ ծավալը 288 մ ³ , ձգման կետ՝ ծավալը 288 մ ³ , օդափոխման խուց՝ ծավալը 155 մ ³) :			
110	ԳՈՒ	Ցեմենտի ավտոմատացված պահեստ 240 տոննա տարողությամբ (տիպային նախագիծ 409-29-82):	1 պահեստ	39,498.01	53,322.31
111	ԳՈՒ	Երկրորդական հումքի արտադրանախապատրաստման ձեռնարկության պահեստային մասնաշենք (շենքի ծավալը - 7598 մ ³ , 1-հարկանի, հատակազծում 48x18մ չափերով, 6,6 մ բարձրությամբ հավաքովի ե/բ կոնստրուկցիաներից, ծածկը հավաքովի երկաթբետոնյա սալերից, հավաքովի ե/բ ֆերմաների վրայով, տանիքը գլանափաթեթային):	խմ	13.12	17.71
112	ԳՈՒ	Քաղաքացիական պաշտպանության գույքի պահպանման պահեստ (շենքի ծավալը - 2502 մ ³ , տիպային նախագիծ - 211-73, հատակազծում 36x12մ չափերով, 5,3 մ բարձրությամբ, պատերը կանոնավոր տուֆ քարից, ծածկը հավաքովի ե/բ սալերից, տանիքը գլանափաթեթային):	խմ	13.8	18.63
113	ԳՈՒ	Վառելիքաքսուքային նյութերի պահեստ (TCM) (տիպային նախագիծ - 704-1-182,86, պատերը սրբատաշ բազալտե և տուֆե քարերից, ծածկը հավաքովի ե/բ սալերից, տանիքը գլանափաթեթային):	1 պահեստ	3763.68	5,080.97
4. ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՇԵՆՔԵՐ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ					
		4.1 Տրանսֆորմատորային ենթակայաններ			
114	«Երևաննախագիծ» ԲԲԸ	Բաշխիչ տրանսֆորմատորային ենթակայան (ք. Երևան), քարե շինություն, 2x 1000ԿՎ:	1 ենթակայան		119,043.80
115	«Երևաննախագիծ» ԲԲԸ	Տրանսֆորմատորային ենթակայան (ք. Երևան), քարե շինություն, 2x 1000ԿՎ:	1 ենթակայան		21,048.48
116	«Երևաննախագիծ» ԲԲԸ	Տրանսֆորմատորային ենթակայան (ք. Երևան), քարե շինություն, 2x 1000ԿՎ:	1 ենթակայան		48,346.80
117	«Երևաննախագիծ» ԲԲԸ	Ենթակայան (ք. Երևան), քարե շինություն, 2x 630ԿՎ:	1 ենթակայան		40,295.60
118	«Երևաննախագիծ» ԲԲԸ	Սնուցող ենթակայան ներտարածքային ցանցի (ք. Երևան), քարե շինություն, 10ԿՎ:	1 ենթակայան		36,317.80
119	«Երևաննախագիծ» ԲԲԸ	Կապի ստորգետնյա արտաքին գծեր 10 ԿՎ, պլաստմասսե կոշտ խողովակ:	գծմ		24,316.70
120	ԳՈՒ	Կենտրոնական ջերմակայան 35 մզվ հզորությամբ:	1 կայան	82400.53	111,240.72
121	ԳՈՒ	Տրանսֆորմատորային ենթակայան K-31-630 M5, եռակաբել մուտքով (250 կՎԱ հզորությամբ, հիմքո՝	1 ենթակայան	10183.48	13,747.70

		ժապավենային խամքարաբետոնից, պատերը՝ «Միդիս» շարվածք տուֆ քարից, տանիքը՝ հարթ քառաշերտ ռուբերոիդից):			
122	ԳՈՒ	Տրանսֆորմատորային ենթակայան B - 41-400 M5, քառակաբել մուտքով, 2x400 կվԱ հզորությամբ (հիմքը՝ ժապավենային խամքարե M -100 բետոնից, պատերը՝ կանոնավոր ձևի տուֆ քարի շարվածք, տանիքը՝ հարթ քառաշերտ ռուբերոիդից):	1 ենթակայան	6516.06	8,796.68
123	ԳՈՒ	Տրանսֆորմատորային ենթակայան K -42- 630 M5, քառակաբել մուտքով, 2x400 կվԱ հզորությամբ (հիմքը՝ ժապավենային խամքարե M -200 բետոնից, պատերը՝ կանոնավոր ձևի տուֆ քարի շարվածք, տանիքը՝ հարթ քառաշերտ ռուբերոիդից):	1 ենթակայան	12765.5	17,233.43
124	ԳՈՒ	Տրանսֆորմատորային ենթակայան K -42- 630 M5, քառակաբել մուտքով, 2x630 կվԱ հզորությամբ (հիմքը՝ ժապավենային խամքարե M -200 բետոնից, պատերը՝ կանոնավոր ձևի տուֆ քարի շարվածք, տանիքը՝ հարթ քառաշերտ ռուբերոիդից):	1 ենթակայան	12932.79	17,459.27
125	ԳՈՒ	Տրանսֆորմատորային ենթակայանի հետ համատեղված բաշխիչ կայան 10 կվԱ լարման, հիմքը՝ բետոնի բլոկներից, պատերը՝ ուղիղ ձևի տուֆ քարերից, երեսի կողմը՝ սրբատաշ տուֆ քարերից, պատերը՝ ուղիղ ձևի տուֆ քարերից, երեսի կողմը՝ սրբատաշ տուֆ քարերից, ծածկը՝ հավաքովի ե/բետոնե սալերից, տանիքը՝ հարթ ջերմապահպանված:	1 ենթակայան	42557.79	57,453.02
126	ԳՈՒ	Տրանսֆորմատորային ենթակայան 2 տրանսֆորմատորի համար (2x630 կվԱ հզորությամբ 407-3-351,84 տիպային նախագիծ, շենքի ծավալը - 262,0 մ ³ , պատերը՝ կանոնավոր ձևի տուֆ քարից, ծածկը՝ թեթև բետոնյա պանելներից, տանիքը՝ գլանափաթեթային):	1 ենթակայան	11249.29	15,186.54
127	ԳՈՒ	Տրանսֆորմատորային ենթակայան 160 կվԱ հզորությամբ (407-3-286 տիպային նախագիծ, պատերը՝ սրբատաշ տուֆե և բազալտե քարերից, ծածկը՝ հավաքովի ե/բ սալերից, տանիքը՝ գլանափաթեթային):	1 ենթակայան	7123.15	9,616.25
128	ԳՈՒ	Տրանսֆորմատորային ենթակայան 160 կվԱ հզորությամբ (407-3-288 տիպային նախագիծ, պատերը՝ սրբատաշ տուֆե և բազալտե քարերից, ծածկը՝	1 ենթակայան	4640.16	6,264.22

		հավաքովի ե/բ սալերից, տանիքը՝ գլանափաթեթային):			
129	ԳՈՒ	Տրանսֆորմատորային ենթակայան 2x250 կվԱ հզորությամբ (407-3-349,84 տիպային նախագիծ, պատերը՝ ուղիղ ձևի տուֆե քարերից, ծածկը՝ հավաքովի ե/բ սալերից, տանիքը՝ գլանափաթեթային):	1 ենթակայան	9564.28	12,911.78
130	ԳՈՒ	Տրանսֆորմատորային ենթակայան 250 կվԱ հզորությամբ (407-3-287 տիպային նախագիծ, պատերը՝ կանոնավոր տուֆ քարից, ծածկը՝ հավաքովի ե/բ սալերից, տանիքը՝ գլանափաթեթային):	1 ենթակայան	5843.74	7,889.05
131	ԳՈՒ	Տրանսֆորմատորային ենթակայան 100 կվԱ հզորությամբ, երկու տրանսֆորմատորի համար (407-3-349,84 տիպային նախագիծ, շենքի ծավալը՝ 238 մ ³ , պատերը՝ կանոնավոր տուֆ քարից, ծածկը՝ թեթև բետոնե կլորախոռոչ պանելներից, տանիքը՝ գլանափաթեթային):	1 ենթակայան	6674.64	9,010.76
132	ԳՈՒ	Տրանսֆորմատորային ենթակայան 160 կվԱ հզորությամբ, երկու տրանսֆորմատորի համար (407-3-349,84 տիպային նախագիծ, շենքի ծավալը՝ 201,5 մ ³ , պատերը՝ սրբատաշ տուֆե և բազալտե քարերից, ծածկը՝ հավաքովի ե/բ սալերից, տանիքը՝ գլանափաթեթային):	1 ենթակայան	10434.23	14,086.21
133	ԳՈՒ	Տրանսֆորմատորային ենթակայան 1x400 կվԱ հզորությամբ (PY-10 KBT, 407-3-288 տիպային նախագիծ, պատերը՝ կանոնավոր տուֆ քարից, ծածկը՝ թեթև բետոնե սալերից, տանիքը՝ գլանափաթեթային):	1 ենթակայան	4699.43	6,344.23
134	ԳՈՒ	Տրանսֆորմատորային ենթակայան 100 կվԱ հզորությամբ (407-3-43,75 տիպային նախագիծ, շենքի ծավալը՝ 123,2 մ ³ , պատերը՝ կանոնավոր տուֆ քարից, ծածկը՝ ե/բ պանելներից, տանիքը՝ գլանափաթեթային):	1 ենթակայան	4554.49	6,148.56
135	ԳՈՒ	Կոմպլեկտավորված տրանսֆորմատորային ենթակայան 10/0,4 կվ լարմամբ 250 կվԱ հզորությամբ:	-"	658.41	888.85
		4.2 10 կվ բարձր լարման կաբելային գծեր			
136	ԳՈՒ	Բարձր լարման կաբելային գիծ 3x95 մմ հատույթով, BBB - 10 կվ տեսականիչի, խրամատոււմ 2 կաբել:	գծմ	11.39	15.38
137	ԳՈՒ	Բարձր լարման կաբելային գիծ 3x95 մմ հատույթով, IԿԱՅԵ - 10 կվ տեսականիչի, խրամատոււմ 1 կաբել:	գծմ	7.51	10.14
138	ԳՈՒ	Բարձր լարման կաբելային գիծ	գծմ	11.39	15.38

		3x120 մմ հատույթով, ААБ - 10 կվ տեսականիշի, խրամատում 2 կաբել:			
139	ԳՈՒ	Բարձր լարման կաբելային գիծ 3x120 մմ հատույթով, АСБ - 10 կվ տեսականիշի:	զծմ	16.05	21.67
		4.3 Էլեկտրափոխանցման օդային գիծ 10 կվ լարման			
140	ԳՈՒ	Օդային գիծ 10 կվ լարման (հենարանները՝ փայտյա, երկաթետոնե կցորդներով) լարը АС-70/11 տեսականիշի:	զծմ	3.93	5.31
141	ԳՈՒ	Օդային գիծ 10 կվ լարման (հենարանները՝ փայտյա, երկաթետոնե կցորդներով) լարը АС-35 տեսականիշի:	զծմ	4.53	6.12
142	ԳՈՒ	Օդային գիծ 10 կվ լարման (հենարանները՝ երկաթետոնյա) լարը АС-70/8 տեսականիշի:	զծմ	10.07	13.59
143	ԳՈՒ	Օդային գիծ 10 կվ լարման - ժամանակավոր սնուցման (մոնտաժում և ապամոնտաժում) (հենարանները՝ երկաթետոնե), լարը АС-50,8 տեսականիշի, կապի գծերը БЛ - 0,4 կվ տեսականիշի:	զծմ	8.94	12.07
		4.4 Ցածր լարման կաբելային գծեր և ցանցեր			
144	«Երևաննախագիծ» ԲԲԸ	0.4 կվ կաբելային գիծ, խողովակ քառակուսի ա/ց խողովակ կաբել АББГ-1:	զծմ		12.28
145	«Երևաննախագիծ» ԲԲԸ	0.4 կվ կաբելային ցանց, խողովակ քառակուսի:	զծմ		327.46
146	«Երևաննախագիծ» ԲԲԸ	0.4 կվ կաբելային ցանց, խողովակ քառակուսի:	զծմ		201.80
147	«Երևաննախագիծ» ԲԲԸ	0.4 կվ կաբելային ցանց, խողովակ քառակուսի 40x40x3, կաբել АББГ-1:	զծմ		10.50
148	ԳՈՒ	Ցածր լարման կաբելային գծեր 3x95 +1x35 մմ հատույթով, ААШБ-1000 տեսականիշի, խրամատում 4 կաբել:	զծմ	4.0	5.40
149	ԳՈՒ	Ցածր լարման կաբելային գիծ 4x50 մմ հատույթով, АББГ-1000 տեսականիշի, խրամատում 2 կաբել:	զծմ	2.44	3.29
150	ԳՈՒ	Ցածր լարման կաբելային գիծ 3x35 մմ հատույթով, АББГ-100 տեսականիշի, խրամատում 2 կաբել:	զծմ	2.31	3.12
151	ԳՈՒ	Ցածր լարման կաբելային գիծ 3x50 մմ և 2x16 մմ հատույթով, АББГ-1000 տեսականիշի, խրամատում 1 կաբել:	զծմ	7.4	9.99
		4.5 Տարածքի էլեկտրալուսավորում			
152	«Երևաննախագիծ» ԲԲԸ	Արտաքին լուսավորության ցանց (ք. Երևան), կաբել այլումինե, խողովակ մետաղյա:	զծմ		11.10
153	«Երևաննախագիծ» ԲԲԸ	Արտաքին լուսավորության ցանց (ք. Երևան), բարձակ (քառակուսի խողովակ) կաբել այլումինե 100 մx 65.1:	զծմ		101.98
154	«Երևաննախագիծ» ԲԲԸ	Արտաքին լուսավորության ցանց	զծմ		126.86

		(ք. Երևան), բարձակ (քառակուսի խողովակ) կաբել այլումինե 100 մx 65.1:			
155	«Երևաննախագիծ» ԲԲԸ	Արտաքին լուսավորության ցանց (ք. Երևան), կաբել այլումինե:	զծմ		11.62
156	ԳՈՒ	Տարածքի էլեկտրալուսավորում 3x25 մմ հատույթով, АББГ-1000 տեսականիշի կաբելից:	զծմ	8.38	11.31
157	ԳՈՒ	Տարածքի էլեկտրալուսավորում 3x6 մմ, 2x6 մմ հատույթներով, АББГ-1000 տեսականիշի կաբելից:	զծմ	7.4	9.99
158	ԳՈՒ	Տարածքի էլեկտրալուսավորում 4x25 մմ հատույթով, АББГ-1000 տեսականիշի կաբելից:	զծմ	8.62	11.64
159	ԳՈՒ	Տարածքի էլեկտրալուսավորում 2x16 մմ, 3x16 մմ և 4x16 մմ հատույթներով, АББГ-1000 տեսականիշի կաբելներից:	զծմ	13.21	17.83
		4.6 Արտաքին լարման սարքավորումներ			
160	ԳՈՒ	Արտաքին ցածր լարման սարքավորումներ (ասբոցեմենտի խողովակներից) ТПП-50x2x0,5 մմ տեսականիշի կաբելից:	զծմ	4.73	6.39
161	ԳՈՒ	Արտաքին ցածր լարման սարքավորումներ (ասբոցեմենտի խողովակներից) ТПП-50x2x0,5 մմ տեսականիշի կաբելից, առանց հորերի:	զծմ	2.03	2.74
162	ԳՈՒ	Արտաքին թույլ լարման սարքավորումներ (ասբոցեմենտի խողովակներից) ТПП-10x2x0,5 մմ տեսականիշի կաբելից:	զծմ	2.47	3.33
163	ԳՈՒ	Արտաքին թույլ լարման սարքավորումներ (ասբոցեմենտի խողովակներից) ТПП-50x2x0,5 մմ և ТПП-100x2x0,5 մմ տեսականիշի կաբելներից:	զծմ	4.02	5.43
164	ԳՈՒ	Արտաքին ցածր լարման սարքավորումներ (ասբոցեմենտի խողովակներից) ТПП-10x2x0,5 մմ և ТПП-20x2x0,5 մմ տեսականիշի կաբելներից-հեռախոսացում:	զծմ	4.28	5.78
165	ԳՈՒ	Ռադիոֆիկացում-լարը պողպատյա 3 մմ հատույթով:		0.24	0.32
5. ԿԱՊԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՇԵՆՔԵՐ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ					
166	«Երևաննախագիծ» ԲԲԸ	Հեռախոսային ցանց, պլաստմասսե խողովակ:	զծմ		3.43
167	«Երևաննախագիծ» ԲԲԸ	Կապի հանգույց, պլաստմասսե խողովակներ:	զծմ		3.38
168	«Ղ-Տելեկոմ» (Վիվասել)	Ալեհավաք բջջային կայանի էլեկտրասնուցման 10ԿՎ 10 օդային գծի (ՕԳ (կառուցում) Գեղարքունիքի մարզ, գ. Սելիմ), փայտյա հենասյուներ բաժանիչ 10 ԿՎ-2 հատ, հաղորդալար, ԱՍ-25 քմ LՏԵ 10/0.4 կՎ -25ԿՎԱ, մետաղական ցանկապատ 5375 զծմ:	զծմ		9.65
169	«Ղ-Տելեկոմ» (Վիվասել)	Ալեհավաք բջջային կայանի էլեկտրասնուցման 0.4 ԿՎ օդային գծի (ՕԳ (կառուցում))	զծմ		12.70

		Արագածոտնի մարզ, գ. Լեռնապար, փայտյա հենասյուն, մալուխ ԿՎԳ-4x10քմմ մետաղաձուլման D-6մ, 475 զծմ:			
170	«Ղ-Տելեկոմ» (Վիվասել)	Ալեհավաք բջջային կայանի էլեկտրասնուցման 10ԿՎ օդային գծի (ՕԳ (կառուցում) Լոռու մարզ, գ. Սարամեջ), փայտյա հենասյուներ, բաժանիչ 10 ԿՎ-2 հատ, հաղորդակար ԱՍ-35 քմմ ԼՏԵ-10/0.4 ԿՎ 25 ԿՎԱ, մետաղական ցանկապատ, 750 զծմ:	զծմ		12.10
171	«Ղ-Տելեկոմ» (Վիվասել)	Ալեհավաք մետաղական կայանի տեղադրում դաշտային պայմաններում h=30մ, աշտարակ՝ ցինկապատ մետաղից h=30մ, մետաղական ցանկապատ Ե/Ք հիմք, 100քմ:	քմ		180.12
172	«Ղ-Տելեկոմ» (Վիվասել)	Ալեհավաք մետաղական կայանի տեղադրում շենք-շինությունների տանիքներին h=5-8մ, աշտարակ՝ ցինկապատ մետաղից, Ե/Ք միաձույլ հիմք, 7քմ:	քմ		893.50
173	«Ղ-Տելեկոմ» (Վիվասել)	Ալեհավաք բջջային կայանի 0.4ԿՎ էլեկտրասնուցում, մալուխային օդային գիծ՝ 440 զծմ, մալուխ ԿՎԳ-4x10քմմ, մետաղական հենասյուն, d=100, L=7մ, մետաղաձուլման D=4մմ, 440զծմ:	զծմ		16.68
174	«Ղ-Տելեկոմ» (Վիվասել)	Ալեհավաք բջջային կայանի էլեկտրասնուցման 10ԿՎ ՕԳ-ի կառուցում, փայտյա հենասյուներ, բաժանիչ 10ԿՎ՝ 2 հատ, հաղորդակար ԱՍ-25 քմմ, ԼՏԵ-10/0.4ԿՎ-25ԿՎԱ , մետաղական ցանկապատ, օդային գիծ՝ 1420 զծմ:	զծմ		1,194.00
175	«Ղ-Տելեկոմ» (Վիվասել)	Ալեհավաք բջջային կայանի էլեկտրասնուցման 10ԿՎ ՕԳ-ի կառուցում, փայտյա հենասյուներ, բաժանիչ 10ԿՎ՝ 2 հատ, հաղորդակար ԱՍ-25 քմմ, ԼՏԵ-10/0.4ԿՎ-25ԿՎԱ , մետաղական ցանկապատ, օդային գիծ՝ 3260 զծմ:	զծմ		10.34
176	ԳՈՒ	Ալեհավաք բջջային կայանի էլեկտրասնուցման 10ԿՎ ՕԳ-ի կառուցում, փայտյա հենասյուներ, բաժանիչ 10ԿՎ՝ 2 հատ, հաղորդակար ԱՍ-35 քմմ, ԼՏԵ-10/0.4ԿՎ-16ԿՎԱ, մետաղական ցանկապատ, օդային գիծ՝ 21ս60 զծմ:	զծմ		11.47
177	ԳՈՒ	Կապի հանգույցի շենք 20000 համարների համար ավտոմատ հեռախոսակայան (Շենքի ծավալը՝ 11720 մ³, եռհարկանի է, հատակագծում 39x15մ չափերով, հիմքը՝ ժապավենային, սյուների տակի հիմքը միաձույլ Ե/Ք, պատերը՝ որմնապանելներից, երեսապատված տուֆե սալերով, գետնախարիսխը (цоколь) սրբատաշ բազալտից, սյուները՝ հավաքովի Ե/Ք, միջհարկային	1 խմ	32.54	43.93

		ծածկերը՝ հավաքովի ե/բ սալերից, տանիքը՝ ցինկապատված տանիքային պողպատից):			
178	ԳՈՒ	Շենքը մեկհարկանի է, նկուղով (բաղկացած է երեք ծավալից, հատակագծում երկու ուղղանկյուն ծավալներն են 12,50 x 16,00 առանցքների միջև եղած չափերով, որոնք միացված են աբոնենտների սպասարկման սրահով և բաշխիչ սրահով, հատա-կագծում բազմանկյուն լուծմամբ, հարկի բարձ-րությունը 3,60 մ է հատակից առաստաղ, իսկ նկուղի նիշերը - 3,22 և 2,72 մ՝ 0,000 նիշից, կրող պատերը - «Միդիս» տիպի շարվածքով, կրող պատերի տակ հիմքերը ժապավենային են, բետոնե B -12,5 դասի և կետային են կենտրոնական ծավալում):	խմ	40.59	54.80
6. ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ					
179	«Հանապարհաշինություն» ՓԻԳ ՀՀ ֆիննախ	Հանրապետական նշանակության ա/ճ կառուցում (Արմավիր-Իսահակյան-Գյումրի), հողային պաստառ-11.8-14մ, երթևեկային մասի լայնություն-7.8-8.4մ ճանապարհային հագուստ, կամուրջներ, ջրահեռացման համակարգ, երթևեկության անվտանգության տարրեր:	կմ		99,404.97
180	«Հանապարհաշինություն» ՓԻԳ ՀՀ ֆիննախ	Հանրապետական նշանակության ա/ճ կառուցում (Հ-17 Գուսանագյուղ-Հոռոմ-Արթիկ-Ալազյազ), հողային պաստառի լայնություն - 12մ, երթևեկային մասի լայնություն-8մ ճանապարհային հագուստ, կամուրջներ, ջրահեռացման համակարգ, երթևեկության անվտանգության տարրեր, հեղեղատար կոյուղու կառուցում, արտաքին լուսավորություն:	կմ		126,282.90
181	«Հանապարհաշինություն» ՓԻԳ ՀՀ ֆիննախ	Համաքաղաքային նշանակության փողոցի վերակառուցում (ք. Երևան, Բարեկամության հրապարակ-Կոմիտասի պողոտա), փողոցի ընդհանուր լայն. - 12.5-50մ, երթևեկային մասի լայնություն - 21.5-28մ, տրամվայի գծերի ապամոնտաժում, նոր եզրաքարերի տեղադրում, մայթերի կառուցում, երթևեկային մասի հարթեցում, նոր պատվածքի կառուցում, հեղեղային կոյուղու և ոռոգման ջրագծի կառուցում, երթևեկության տարրերի տեղադրում, արտաքին լուսավորություն, թունելային անցում:	կմ		1,078,754.17
182	«Երևաննախագիծ ԲԲԸ»	Ճանապարհի կառուցում, գրունտի մշակում, հարթեցում:	քմ		101.30
6. ԿՈՍՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՆՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԵՐ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ					
ԻՆՃԵՆԵՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ					
6.1 Կաթսայատներ					
183	ՀՍՆՀ	Ղարոզի կաթսայատան կառուցում	1 կաթսա-		38.910.24

		և ներքին ջեռուցման ցանցի իրականացում (ջեռուցվող մակերես՝ 4687 քմ, երկու կաթսա, յուր 220 ԿՎՏ հզորությամբ):	յատույն		
184	ՀՍՆՀ	Ղարոցի կաթսայատան կառուցում (ջեռուցվող մակերես՝ 2338 քմ, երկու կաթսա):	1 կաթսայատույն		24,054.10
185	ՀՍՆՀ	Ղարոցի կաթսայատան կառուցում և ներքին ջեռուցման ցանցի իրականացում (ջեռուցվող մակերես՝ 4677 քմ, երկու կաթսա, յուր 260 ԿՎՏ հզորությամբ):	1 կաթսայատույն		31,342.48
186	ԳՈՒ	Կաթսայատույն «Ջահ» տիպի 6 կաթսայով վառարանային կենցաղային վառելիքով 1000կկալ/կգ ջերմատարունակությամբ վառելիքի փակ պահեստով 378 գկալ/ժամ ջերմատարողողականությամբ, ծխնելույզով:	1 կաթսայատույն	107560.52	145,206.70
187	ԳՈՒ	Կաթսայատան շենք 1925,5 խմ (առանց ծխնելույզի) ծավալով, պատերը - կանոնավոր ձևի տուֆաքարերից, այդ թվում.			
		կաթսայատան շենքը,	1 կաթսայատույն	104972.68	141,713.12
		ծխնելույզը:	1 ծխնելույզ	2587.83	3,493.57
		6.2 Պոմպակայաններ			
188	ԳՈՒ	Ավտոմատացված հրդեհամարման պոմպակայան 100 մ/ժամ արտադրողականությամբ (շենքի ծավալը - 439 մ ³ , տիպային նախագիծ 901-2-139,85, պոմպակայանի շենքը նկուղով է, կանոնավոր ձևի տուֆ քարե պատերով, ծածկը՝ ե/բ հավաքովի սալերից, տանիքը՝ գլանափաթեթային):	1 պոմպակայան	16,997.66	22,946.84
189	ԳՈՒ	Ջրամատակարարման պոմպակայան (շենքի ծավալը - 259,9 մ ³ , պատերը սրբատաշ բազալտե և տուֆե քարերից, ծածկը՝ ե/բ հավաքովի պանելներից, տանիքը՝ գլանափաթեթային):	1 պոմպակայան	9,999.6	13,499.5
190	ԳՈՒ	Ջրամատակարարման պոմպակայան (շենքի ծավալը - 206,0 մ ³ , պատերը սրբատաշ բազալտե և տուֆե քարերից, ծածկը՝ ե/բ հավաքովի սալերից, տանիքը՝ գլանափաթեթային):	1 պոմպակայան	8,422.6	11,370.4
191	ԳՈՒ	Ջրամատակարարման պոմպակայան (շենքի ծավալը - 600 մ ³ , հատակագծում 15x6 մ չափերով, 4,8 մ բարձրությամբ, պատերը սրբատաշ բազալտե և տուֆե քարերից, ծածկը՝ ե/բ հավաքովի կողավոր սալերից, տանիքը՝ գլանափաթեթային):	1 պոմպակայան	11,616.4	15,682.2
